

ծել արևելահայ և արևմտահայ լեզուների քերականական իրողություններին կազմված մի համադրական լեզու։ Այդ սխալ տեսակետ է։ Այս բոլորից հետևում է, որ մեր ազգային լեզվի հետագա կատարելագործման հարցերը քննելիս, ոչ թե պետք է ելնել հայ անցյալի զրական լեզուներից և բարբառներից, ինչպես հակված են կարծելու որոշ լեզվաբաններ, այլ պետք է ելնել մեր լեզվի արդի վիճակից և մշակել մեր լեզուն նկատի ունենալով սոցիալիստական ազգերի կուլտուրաների ու լեզուների զարգացման հեռանկարները և այնքանով օգտագործել հին լեզուներն ու բարբառները, որքանով նրանք չեն հակասում հայերենի ընդհանուր խնդիրներին։

Այս բոլորից հետևում է, որ չի կարելի մեր ազգային լեզուն բաժանել երկուսի, խախտել նրա միասնությունը, հետևաբար խախտել մեր ժողովրդի միասնությունը։ Ինչպես հայ ժողովրդի բոլոր հատվածները, որտեղ էլ նրանք ապրելիս լինեն, իրենց հայ են անվանում և իրենց հայ ազգից չեն անջատում և չեն հակադրվում հայ ազգին, այնպես էլ հայ ազգային լեզվի բոլոր ճյուղավորումները հայերեն են և ենթակա միասնական ազգային լեզվին։ Այդ առումով էլ եթե մոտենանք արևմտահայերենին, պետք է ասենք, որ նա նույնպես մեր ազգային լեզվի բարբառն է, թեև որոշ տերիտորիալ բարբառների համեմատությամբ ավելի մշակված և օգտագործելի ավելի շատ փաստեր ունեցող, բայց համենայն դեպս ընդհանուր ազգային լեզվին ստորադաս և ոչ թե նրան հավասար ազգային լեզու, որովհետև յուրաքանչյուր ազգ ունի մի միասնական և նրա բոլոր անդամների համար ընդհանուր լեզու։

ԸՆԿ. Ծ. ԱՂԱՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանությունից հարցերը» աշխատությունը խոշորագույն ավանդ է մարքսիզմ-լենինիզմի դանձարանում։ Այդ աշխատությունը սովետական դիտությունից զարգացման, նրա անսխալ խընճաց վերնալի համար նորանոր հեռանկարներ է բացում։

Ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունից լույսի տակ ես ցանկանում եմ կանգ առնել հայոց լեզվի զարգացման հետ կապված մի կարևոր հարցի վրա, այն է՝ հրք և ինչպես է սխալում հայ ժողովրդական լեզվից հայ ազգային լեզվին անցնելու պրոցեսը։ Մարքս-լենինյան ուսմունքը՝ հասարակության պատմության վերաբերյալ, միանգամայն պարզ լույս է սփռում այս հարցի վրա։

«Ժողովուրդը և ժաղկը» հասկացողությունները պատմական կատեգորիաներ են, որոնք հանդես են եկել տարբեր էպոխաներում և արտահայտում են մարդկանց հասարակական կապերի ձևերը զարգացման տարբեր աստիճաններում։

Մարդիկ ամենավաղ ժամանակաշրջանում, իրենց գոյությունը պաշտպանելու և նյութական բարիքներ ձեռք բերելու համար, միավորվում էին և կոլեկտիվ ուժերով պայքարում բնության դեմ։ Մարդիկ սկզբում ապրում էին ոչ մեծ խմբերով, Հետո առաջացան կոլեկտիվներ, որոնք հիմնված էին արյունակցական կապերի ու տոհմական հարաբերությունների վրա։ Նախնադարյան համայնական կարգերի հիմնական բնիշը տոհմ էր (род) — նախ մատրիարխատը (մայրական), իսկ հետագայում՝ պատրիար-

խատը, Հետագայում ծագումով ավելի մոտ մի շարք տոհմերից ստեղծվում են ավելի մեծ խմբեր, ցեղեր (племена) և ցեղային միություններ (племенные союзы)։

Սակայն արտադրողական ուժերի զարգացման, մասնավոր սեփականությունից և անհամասարելից ատաճացման հետևանքով հասարակությունը բաժանվում է հակամարտ դասակարգերի, առաջանում է պետությունը։ Դասակարգային հասարակարգի առաջացման հետևանքով հիմնովին փոխվում են նաև մարդկանց հասարակական, քաղաքական և արտադրական հարաբերություններն ու կապերը։ Այն աշուպիսի պայմաններում՝ արյունակցական և ցեղային կապերի թուլացման, նրանց առանձին միավորումների ոչնչացման հետևանքով, մի տերիտորիայի վրա առաջանում են մարդկանց ընդհանուր միավորումներ և կազմավորվում է ժողովուրդը։ Այս պրոցեսը կատարվում է դարերի ընթացքում։ Երկար ժամանակ ցեղային տոհմատիրական մնացուկները զեռես շարունակում են պահպանել իրենց դոյությունը։

Այսպիսով՝ ժողովուրդների առաջացումը և կազմավորումը — դա պատմականորեն առաջացած մարդկանց ընդհանրությունն է, որի տնտեսական հիմքը նախակապիտալիստական արտադրական հարաբերություններն են։

Ձևոտանանք նշել, որ ժողովուրդ հասկացողությունը այժմ սովորություն է դարձել զործածել ավելի լայն իմաստով, օրինակ, ասում ենք, սովետական ժողովուրդ, ուսև ժողովուրդ, հայ ժողովուրդ և այլն։

Բուրժուական, կապիտալիստական կարգերի առաջացման հետևանքով տեղի է ունենում ժողովուրդների կոնսոլիդացիա և ձևավորվում է բուրժուական ազգը։ Սակայն այստեղ էլ զեռես երկար ժամանակ պահպանվում են բազմաթիվ ժողովուրդներ, դանդաղում է նրանց ազգ դառնալու պրոցեսը՝ շնորհիվ կապիտալիստական երկրների գաղութային քաղաքականությունից, սոցիալական և ազգային ճնշումների ու մի շարք այլ երևույթների։

«Ազգը, — գրում է ընկեր Ստալինը, — մարդկանց պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրությունն է, որ ծագել է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և կուլտուրայի ընդհանրության մեջ զրսևորվող հոգևոր կերտվածքի ընդհանրության բազայի վրա»¹։

Ազգի հանդես դալը, նրա կազմավորումը կապված է նոր բուրժուական հարաբերությունների զարգացման և հին ֆեոդալական կարգերի լիկվիդացման հետ։

Այդ մասին ընկեր Ստալինը գրել է.

«Ազգը ոչ թե սոսկ մի պատմական կատեգորիա է, այլ որոշ դարաշրջանի, բարձրացող կապիտալիզմի դարաշրջանի պատմական կատեգորիա, ֆեոդալիզմի լիկվիդացման ու կապիտալիզմի զարգացման պրոցեսը միաժամանակ մարդկանց որպես ազգեր կազմավորվելու պրոցեսն է»²։

Սակայն պետք է նկատել, որ վերև նշված չորս հատկանիշները պատրաստի և միանգամից հանդես չեն գալիս, երկար ժամանակ հասունանում են հենց ֆեոդալական հասարակարգի ընդերքում, կապիտալիստական-բուրժուական հարաբերությունների զարգացման հետ միասին։

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 2, էջ 346։

² Նույն տեղում, էջ 354։

Բեռ ավելին, ազգի կազմավորման այդ հատկանիշների որոշ մասը գոյություն են ունեցել դեռ շատ վաղուց: Այսպես, օրինակ, լեզվի ընդհանրությունը ցեղի և ժողովուրդների մեջ գոյություն է ունեցել դեռևս ազգի ձևավորման պրոցեսից շատ առաջ: Սակայն, ինչպես նշում է բնկեր Ստալինը «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության մեջ՝ «Հետազայում, կայսրության լեզուն, ֆեոդալական մասնատվածություն լիկվիդացմանը և ազգային շուկայի գոյացմանը զուգընթաց ժողովուրդները (народами) զարգացան ու դարձան ազգ, իսկ ժողովուրդների լեզուները՝ ազգային լեզուներ»:

Այստեղից էլ պարզ է, որ ազգային լեզուն ժողովրդական լեզվի զարգացումն է, նրա շարունակությունն է և բոլոր թելերով կապված է նրա հետ, և հետևապես ազգային լեզուն երբեք չի կարելի հակադրել ժողովրդական լեզվին: Այսպիսով անցումը ժողովրդական լեզվից — դեպի ազգային լեզուն, կատարվում է, ոչ թե հնի լիկվիդացումով և նոր լեզվի ստեղծումով, այլ բավական երկարատև ժամանակամիջոցում, աստիճանաբար զարգանալու և հարստանալու հետևանքով, հնի աստիճանաբար մահացման և նորի ստեղծման հետևանքով:

Ժողովրդի լեզուն, հանդիսանալով համաժողովրդական, բոլորի համար հասկանալի մի լեզու, միաժամանակ ունի իր ճյուղավորումները, որոնք հանդես են գալիս որպես տեղական (տեղիորիալ) բարբառներ: Ազգային լեզվի զարգացման և տեղիորիալ մասնատվածության վերացման հետևանքով աստիճանաբար բարբառները ձուլվում են ընդհանուր ազգային լեզվի մեջ և հետզհետե վերանում են:

Այսպիսով՝ ժողովրդական հայերեն լեզուն գոյություն է ունեցել կայսրության տարածական հարաբերություններից դեռևս շատ առաջ, երբ 19-րդ դարում սկսեց ձևավորվել հայ ազգային լեզուն, ապա սրա հիմքում դրվեց Արարատյան դաշտի ժողովրդական լեզուն: Բուրժուական հարաբերությունների զարգացումը տանում էր դեպի մի ընդհանուր համազգային լեզվի ստեղծումը: Ահա այդպիսի պայմաններում էր ընթանում պայքարը աշխարհաբար դրական լեզվի և դրաբարի միջև մի կողմից, և աշխարհաբարի ու տարբեր բարբառների միջև մյուս կողմից: Այդ պայքարում առաջին վճռական քայլը կատարեց խաչատուր Արուստյանը, իսկ հետո այդ գործը շարունակեցին ու խորացրին 19-րդ դարի երկրորդ կեսի հայ առաջավոր գրողներն ու մի շարք հասարակական-քաղաքական գործիչներ:

Ոոսելով ժողովրդի լեզվի և գրականության մասին, պետք է նկատել, որ ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգում, ոչ բոլոր դեպքերում է, որ ժողովրդի լեզուն իր արտացոլումն է գտնում գրականության մեջ: Այս տեսակետից հասկանալի է դառնում, որ տարբեր շրջաններում հայ խոսնակն իմբերի և անգամ անհատների կողմից հրատարակվող աշխատություններն ու երկերը ոչ բոլոր դեպքերում է, որ իրենց մեջ լիովին արտացոլում են հայ ժողովրդի լեզուն և այդ այն շրջանում, երբ ժողովուրդը դեռ հանդես չէր եկել որպես ձևավորված ազգ: Միանգամայն այլ է դրությունը ազգային լեզվի ժամանակ, որը հանդես է գալիս որպես համաժողովրդական լեզու ավելի լայն իմաստով և ամրապնդվում է դրական

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Հայպետհրատ, էջ 27-28:

նության մեջ՝ Այդ տեսակետից շատ ուշադրավ է Վ. Ի. Լենինի գիտողությունն այն մասին, որ կապիտալիզմի առաջացումով սկսվում է աղգային շարժումը. դրա տնտեսական հիմքը կազմում է այն, որ ապրանքային տնտեսության լիակատար հաղթանակի համար անհրաժեշտ է դառնում բուրժուազիայի տիրապետումը ներքին շուկային։ Իսկ դրա համար ճանհրաժեշտ է պետական համախմբում այն տերիտորիաների, որոնց բնակչությունը խոսում է միևնույն լեզվով, վերացնելով այդ լեզվի դարգացման և զրականություն մեջ այն ամբողջությունը, որն է հզած բոլոր արդյունքները։¹

Պետք է նկատենք, որ հայ ժողովրդի որպես ազգ ձևավորվելու պրոցեսը, նրա աղգային լեզվի կազմավորումը, որը սերտ կերպով կապված է բուրժուական հարաբերությունների դարգացման հետ, կատարվել է երկար ժամանակվա ընթացքում։ Հայտնի է, որ նոր բուրժուական հարաբերությունների դարգացման ժամանակաշրջանում, առանձնապես 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսերին հայ ժողովրդի բոլոր հատվածներում, ինչպես նաև հեռավոր զաղութներում հասարակական-քաղաքական հոսանքներն ու աղատագրական շարժումները բավական ուժեղ թափ են ստանում։ Այդ անկասկած նոր բուրժուական հարաբերությունների աղեկցության տակ առաջացող շարժումը ֆեոդալական կարգերը և օտար բռնակալների լուծը տապալելու համար սկսված մի շարժում էր, որը իր մեջ անկասկած հայ ժողովրդի որպես ազգ ձևավորվելու առաջին սաղմերն էր պարունակում։ Այդ պրոցեսը ավելի արագացավ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական պրոգրեսիվ իրադարձությունից հետո։ Արևելյան Հայաստանը, համեմատած պարսկական ու թյուրքական ռազմա-ֆեոդալական ամենահետամնաց տնտեսաձևի ոռոսական պետության կազմում ավելի արագ է սկսում առաջադիմել տնտեսապես և քաղաքական տեսակետից, ֆեոդալական նախկին աղճատվածությունն ու մանրատվածությունը սկսում է աստիճանաբար վերանալ։ Այդ տեսակետից «Հայկական մարդի» կազմումը, իսկ հետագայում «Երևանյան նահանգի» ստեղծումը, առաջադիմական քայլ էր Արևելյան Հայաստանի նախկին, իրարից տնտեսապես և էթնիկական տեսակետից բաժան-բաժան և ինքնամիութի կյանքով ապրող մասերը ավելի սերտ փոխհարաբերությունների և կապերի մեջ դնելու ուղղությամբ։ Այս բոլորը զգալի չափով նպաստեցին հայ ժողովրդի՝ որպես ազգի ձևավորման և աղգային լեզվի ստեղծման պրոցեսին։ Թե՛ հայ ժողովրդի որպես բուրժուական ազգ ձևավորվելու և թե՛ նրա աղգային լեզվի կազմավորման խնդրում վճռական դեր է սկսում կատարել Արարատյան դաշտի ավազանը՝ Ռուսաստանին միացվելուց հետո։ Սակայն, հայ ժողովրդի որպես ազգ ձևավորվելու պրոցեսի հատկանիշները եթե հանդես են գալիս բավական վաղ շրջանում, ապա այդ պրոցեսը ցայտուն կերպով երևում է արդեն 19-րդ դարի երկրորդ կեսում, առանձնապես հետոն-ֆորմյան ժամանակաշրջանում։ Չնայած նրան, որ 1870 թ. մայիսի 14 ժողովրդի իր բնույթով անչափ կաշկանդիչ էր ու ժելասաֆեոդալական, ժելասաճորտատիրական, բայց և այնպես նա զգալի քայլ էր բուրժուական հարաբերությունների դարգացման համար։ Երա փայլուն արտացոլումն բուրժուական մամուլի և զրականության հսկայական թափով դարգանալն

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 493։

է, որը զժվար է համեմատել նախկին ուրէ շրջանի հետ: Այսպիսի պայմաններում աստիճանաբար դուրս են մղւում բարրառները և զրարարյան ձեերը, հեադհետե հաղթանակում է ընդհանուր համաղղային լեզուն: Այսպիսով՝ հայ ժողովուրդը աստիճանաբար ձեալորւում է որպես աղղ, կաղմալորւում է նրա աղղային լեզուն, որի զարգացումը տեղի է ունենում ընդհանուր լեղվի տերիտորիայի, անտեսական կյանքի և կուտուրայի ընդհանրության մեղ զրոտորող հոգեկան կերտաղծքի ընդհանրության բաղայի վրա:

Սակայն նույնը չի կարելի ասել Արեւմտյան Հայաստանի մասին: Այստեղ հայ ժողովրդի մի գալի մասը՝ մնալով թյուրք բռնակալների բարբարոսական տիրապետության տակ, շարունակեղ ալրել կատարյալ խալարի ու հետամնացության և ֆիղիկական բնաղնղման պայմաններում: Հայ ժողովրդի այս հատաղծը պատմական զեպքերի բերումով չի անղել զարղաղման այն ուղին, ինչ ուղի որ անղել է Արեւելյան Հայաստանը՝ ուսական տիրապետության և ուս մեղ ժողովրդի կուտուրական կապերի բարերար աղղեղության տակ: Թյուրքական պետության կաղմում հայ ժողովրդի տարրեր հատաղծները մնացին մասնատաղծ և բաղան-բաղան: Դեռ ալելին, թյուրքական պետությունը բռնի կերպով բալկաններիղ և երկրի տարբեր շրղաններիղ մեղ քանակությամբ թյուրքեր վերաղնակեղնում էր հայկական շրղաններում, ձղտելով աղղատել հայ զանղաղծների կոմպակտ հատաղծները և այն ասիմիղղիայի ենթարկել: Բնչպես նչել է ընկեր Ստալինը, թյուրք բռնակալների այս ատիմիղղիոն քաղաքականությունը իր նպատակին չհասաղ, սակայն այն նչանակությունը ունեղաղ, որ թյուրքերը հայ բնակչությանը պահեղին տնտեսական ու կուտուրական հետամնաց պայմաններում, իրարիղ կարաղծ ու շարունակ ենթակա աղղաղկային խմբերի հարձակումներին: Հայ ժողովրդի այս հատաղծը միղտ էլ զտնղում էր ֆիղիկական ողնչաղման վտանղի մեղ: Այսպիսի անտեսական ու քաղաքական պայմաններում՝ Արեւմտյան Հայաստանի հայ հատաղծը մնաց ֆեղղաղական ծայրահեղ հետամնացության մեղ: Դեռ ալելին, Արեւմտյան Հայաստանը առանձնապես 19-րղ դարի վերղին քաղերղին և աղաղին համաղխարհային պատերաղմի տարիներին կատարյալ անկում ալրեղ, որի բնակչության մեղամասնությունը սրի քաղվեղ և միայն մի չնչին մասը վերկեղ ցրղելով՝ աղխարհով մեկ, կտրղելով մայր երկրիղ և նրա կուտուրայիղ:

Այսպիսով, պարղ է, որ արեւտահայերի կուտուրայի և աղղային լեղվի զարղաղման համար չկային նպատաղոր պայմաններ ու հնարաղորություններ, ինչպիսի պայմաններ կային Արեւելյան Հայաստանում: Սակայն չի կարելի պատկերաղնել, որ ժողովրղական այղ զանղաղծները Արեւմտյան Հայաստանում ինչ որ իներտ վիճակում էին զտնղում: Ընղհակաղղը չաղաղանղ ուղեղ էր միաղորման, կոնսղղղաղման և թյուրքական ծանր լղիղ աղատղելու ձղտումը: Այղ միաղորմանն ու ինքնաղիտակեղությանը հայերը ձղտում էին իրենղ գոյությունը, իրենղ կուտուրան պաղտպանելու համար: Սակայն թյուրքական լումը շատ ծանր էր, իսկ ժողովուրղը տանղղաղ, հաղաղղաղ և բաղան-բաղան եղաղ:

Հայկական այղ հատաղծների միաղորման և աղատաղրական պայքարի տարրեր պղաններ հանղես եկան, որով ժողովուրղը ձղտում էր ապահղել իր աղատությունը, ստեղղել իր պետականությունը և ապա իր զար-

դաջման ու պրոպագանդայի ուղին հարթելու Մակայն ժողովրդի այդ պրոպագանդայի շարժումը շատ ցածր էր օգտագործում էին ուսանողներին-նախնական տարրերը՝ իրենց դասավանդության շահերի համար։ Այդ մարդիկ հիմնականում կենտրոնացած էին Պոլսում, որտեղ և կատարում էին իրենց ֆեալային պրոպագանդան, հանդես գալով—ամբողջ հայության սնունդ, կազմելով հայկական վայրերում ու քաղաքներում անցկացնելու և վերջապես Վենիզիայի ծով Հայաստանի ստեղծելու մասին փառաստանի պլանները։ Այդ պլանները Պոլսում և թե ուրիշ կենտրոններում ծավալած հայ բուրժուազիայի ներկայացուցիչների համար շատ կարևոր էին՝ սեփական ներքին շուկա ունենալու, եվրոպական և ուսման աճող կապիտալի մրցումից ապահով զործելու համար։

Անա այս նպատակին հասնելու համար՝ Պոլսում սկսվում է հրապարակվել մեծ քանակությամբ դրականություն, ինչպես և լույս են տեսնում պարբերականներ և այսպես մոզայի մեջ է մտնում Պոլսի բարբառը։ Մակայն պետք է համոզվենք պատմական տվյալների հիման վրա, որ այս բարբառն էլ մի միասնական կորիզ չունի, քանի որ Պոլսում հավաքված հայերը եկել էին տարբեր ժամանակներ, Հայաստանի համարյա բոլոր ծայրերից։ Այստեղ կարելի էր գտնել տարբեր բարբառների նմուշներ, որոնք իրար խառնվելով ստեղծել էին մի շտեմբոլած կոնյուկտուրայի տարբեր խոսվածքների։ Նշենք նաև այն, որ այստեղ շատ մեծ ազդեցություն ունենալով Պոլսի ներքին միջավայրի սալոնային աղտոտված, աղավաղված, խոսվածքը, որտեղ շատ մեծ տեղ էին գտել թյուրքական բառերն ու արտահայտությունները, որ գործ էին ածում ծագումով հայ լեզվաբանությունը՝ թյուրք փառաստանի հաճոյանալու համար։ Պոլսի հայ բուրժուազիայի այս հատվածը ամեն կերպ ձգտում էր, որպեսզի իր այս բարբառին համաժողովրդական տեսք տա, այն օգտագործի իր նպատակներին հասնելու համար։

Մակայն, կարող է հարց ծագել՝ չէ, որ մի շարք հայ առաջավոր դրողներ զրեկ են այսպես կոչված ժողովրդական լեզվով։ Այդ առաջավոր դրողների ժողովրդականության մենք չենք հրաժարվի, այն սիրով պետք է ուսումնասիրեն մեր սերունդները, որպես անցյալի ժողովրդական։ Պետք է նշել նաև այն, որ արևմտյան հայերը Պոլսի բարբառով զարկ տալով դրականություն, մամուլին՝—և ստեղծված այդ պայմաններում ուրիշ հնարավորություններ չունեն—պարզ է, իր ժամանակին որոշ դրական դեր կատարել են, քանի որ այդ միակ հնարավոր միջոցով թողել են բավականաչափ կուլտուրական ժողովրդականություն։

Վահան Տերյանը, խոսելով լեզվի մասին, նշում է. «Իմ աչքում պոլսական և առհասարակ արևմտյան դրականությունն ու լեզուն բնավ այն հմայքը չունեն, որ պոլսական ունի շատերի համար։ Ինչ վերաբերվում է վիեննացի և վենետիկցի լեզվին, դա մեզ համար բոլորովին անընդունելի մի լեզու է, դա երբեք չի լինելու մեր դրականության լեզուն»¹։ Սխիթարյանների մասին Տերյանը այն կարծիքն է հայտնում, որ «ներանց գիտությունը կասկածելի գիտություն է, որովհետև այնտեղ, ուր չկա մեթոդ, չկա և գիտություն։ Իսկ նրանց բոլոր մեթոդներից միջնադարի հոտ է փչում»։

¹ Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 182։

Նրանց լեզուն էլ մի լեզու է, որ հավիտյան չի կենդանանալու...» (նույն տեղում)։ Տերյանը Պոլսի լեզվի մասին գրում է՝ որ նրա լեզուն տրոհվել է հեռու-հեռու հայ ժողովրդի բնակավայրից, կտրված է նրանից և չի վարձել ժողովրդական լայն խավերի լեզուն։ Տերյանը խնդիր է դնում թյուրքական լծի տակ դռնվող հայկական շրջաններում տարածել արարատյան լեզուն, քան թե թույլ տալ ռուս պոլսական ճոռոմ ու կեղծ գրականությունն ու արվեստը տարածվեն այնտեղ...»¹ Ռուս դրականություն վսեմ պարզություն, սրտաբաց անկեղծություն նույնիսկ ամենաթույլ ազդեցությունը ավելի ընդունակ է մեր դրականությունը կենդանություն ու կենսունակություն ներշնչելու, քան այն բոլոր ծամածուծությունները, որ անում են, թեպետ և զուցի շատ շնորհալի գրողներ, անվանելով այդ վերադարձ դեպի հայկական ինքնությունը, հեթանոսություն։ Պա նույն սնամեջ ազգամոլության արտաքին է, դա նույն զարհուրելի բառերի սերն է, դա նույն անիմաստ բառերի կույան է, որը ծանոթ է մեզ վաղուց ու վաղուց։²

Սակայն այս չի նշանակում թե Տերյանը դեմ էր ժողովրդի կողմից դարերի ընթացքում ստեղծած լեզվական հարստության օգտագործմանը։ Հարցը վերաբերում է այն բանին, թե ինչ ձևով և ինչ չափով է այն օգտագործվում։ Երա համար էլ Տերյանը գրում է. «Դուրյանին թող չմատնանան, թող չհիշեն և ուրիշներին, իմ խոսքը հոսանքին, բնդանուր ուղղություն է վերաբերվում և ոչ առանձին գրողներին։ Խոսքը վերաբերվում է գրականության ընդհանուր ոգուն և շնչին»³ Ինչպես տեսնում ենք, Տերյանը հարցը սկզբունքայնորեն է դնում և խարաղանելիով արևմտահայ գրականության և լեզվի զարգացման ընդհանուր ուղղությունը, միաժամանակ նշում է նրա լավագույն մասի, պրոգրեսիվ ճյուղի օգտագործման անհրաժեշտությունը։

Ի հակադրություն արևմտահայ իրականության, արևելահայ իրականության մեջ արդեն ստեղծվել էր հայ ազգային լեզվի ու գրականության մի ուժեղ ու ընդհանուր հոսանք։ Ահա թե ինչու Տերյանը գրում է, որ «Թումանյանի մի Փարվանան ես չեմ փոխի պոլսահայ բոլոր հանկարծակի հեթանոսացած պոետների արտադրության հետ»⁴

Ուշագրավ է նաև Տերյանի մի ուրիշ դիտողությունը այսպես կոչված «լեզվի կենտրոնացման» մասին։ Հայտնի է, որ Տերյանը շատ բարձր է գնահատել Շիրվանզադեի գերը մեր դրամատուրգիայի և առհասարակ թատրոնի զարգացման գործում։ Տերյանը նշում է, որ Շիրվանզադեն մեծ չափով նպաստեց լեզունցազգրական դրամայի զարգացմանը մաքուր գրական լեզվով։⁵

Տերյանը առանձնապես ուշագրություն էր դարձնում այն հանգամանքի վրա, որ Շիրվանզադեի «դրամաները մեծապես օգնել են լեզվի կենտրոնացմանը, որ անհրաժեշտ պայմանն է գրականության առաջընթացին»։

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, Տերյանի խոսքերով ասած լեզվի

¹ Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 183։

² Նույն տեղում։

³ Նույն տեղում։

⁴ Նույն տեղում, էջ 183-184։

⁵ Նույն տեղում, էջ 186։

կենտրոնացումը՝ այսինքն ազգային լեզվի ձևավորման պրոցեսը, զրականությունը՝ զարգացման անհրաժեշտ պայմաններից մեկն է։ Պարզ է, որ ազգային լեզու էր Ռուսականի, Շիրվանզադեի լեզուն, որպես իր ժամանակի հայոց լեզվի զարգացման լավագույն արտահայտություն և ոչ թե արևմտահայ բարբառները, որոնք զարգացման միասնական գիծ չունեն և լեզվի կենտրոնացմանը՝ արգելք էին հանդիսանում։

Պարզ է, որ հայ ժողովրդին երկու հատվածի բաժանելը և արևմտահայերի համար բացարձակ ինչ—որ ուրույն զարգացման ճանապարհներ փնտրելը՝ նրանց այսպես կոչված ինքնուրույն լեզվով, հետապնդում էր մի նպատակ՝ զարգացնել արևմտահայերի մեջ՝ նախկինում հակառուսական, իսկ հետագայում էլ հակասովետական օրինատաշիան։ Այս հանգամանքը՝ պետք է ասել, որ մեծ եռանդով օգտագործում են մեր թշնամիներն արտասահմանում։

Մայրենի լեզվի մաքրությունը և նրա զարգացման խնդիրը շատ կարևոր հարց է, որը միշտ էլ զրադեցրել է մեր ժողովրդի առաջավոր ներկայացուցիչներին։ Այդ տեսակետից իր ժամանակին ուշագրավ գիտողություններ է արել մեր անվանի մանկավարժ և զրոգ Հազարոս Աղայանը։ Նա իր «Հայկական հնչյունների մասին» հոդվածում թվարկում է մի շարք ժողովուրդների արտասանությունն հնչյունական ձևերի տարբերությունները և զատապարտում է հատկապես այն երևույթը, երբ արևմտահայերը թյուրքերի ազդեցության տակ անտեսելով հայերեն լեզվի կանոններն ու արտասանությունն ձևերը, այն աղավաղում են։

Ղ. Աղայանը—ուշադրություն է դարձրել նաև այն խնդրի վրա, որ շատ հաճախ բուրժուական քաղաքի ճահճացած, մեղշանական միջավայրը աղավաղում է լեզուն։ Նա գրում է.

«Հնչմանց մեջ նորաձևություն մտցնելը մի տարօրինակ բան է մեծ քաղաքներում և մեծամեծանց տներումը, ուր բանն սկսվում է հարեֆներից և սպառառներից և սակավ առ սակավ վարակում ամբողջ քաղաքը»¹

Աղայանի այս գրույթը լիովին վերաբերվում է Պոլսո բարբառին, որը սոսկալի կերպով աղտոտված է։ Այստեղից էլ պարզ է դառնում, որ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալը ոչ միայն փրկեց հայ ժողովրդին անտեսական ու քաղաքական անկումից, այլ պահպանեց հայոց լեզուն թյուրքական աղտոտություններից։ Հազարոս Աղայանը շատ մեծ նշանակություն է տալիս լեզվաշինարարության հարցերին, բառակազմությունը, քերականական կանոններին և այլն։ Նա ասում է, որ «Լեզուն հանձատի սեփականություն չէ, որ ով ինչպես կամենա, այնպես ծոմոն»։ Աղայանը նշում է. որ ուրիշ էր այն շրջանը, երբ դիր ու գրականություն չկար և ով ինչպես ուզում էր այնպես էլ խոսում էր։ «Այժմ ժողովուրդը ձայն ունի քո գրականության ոճի և դարձվածքի մեջ, նա ասում է. «Պարոն, ես եմ քեզ ապստրոգը, այն բանը ինձ համար ես գրել, բայց լավ չես կատարել իմ պատվերները, դու իմ լեզուն աղճատում ես, և ինչ իրավունքով»²

Շատ ուշագրավ է Աղայանի վերաբերմունքը գեպի այսպես կոչված արևմտահայ լեզուն, որին նա լեզու չի համարում և մեր բոլոր բարբառների

¹ Ղ. Աղայան, Երկեր, հատ. 4, էջ 238։

² Նույն տեղում, էջ 241։

³ Նույն տեղում, էջ 241։

հետ համեմատելով ցույց է տալիս նրա խորթ ու օտարոտի լինելը հայոց լեզվին:

Աղայանը բերում է մի շարք օրինակներ թե ինչպես կամայականորեն որոշ պոլսեցի «բանաստեղծներ» աղավաղում են հայոց լեզուն: Այդ աղավաղումների ու լեզվի աղտոտման պատճառներից մեկն էլ այն է եղել, նշում է Աղայանը, որ «Հարյուր տարու չափ պոլսեցիք չեն ունեցել հայ վարժապետներ, այլ՝ կամ լատին, կամ լատինացած հայեր են եղել դոցա վարժապետները և կամ աղճատ հայախոս անգլիացի միսիոներներ: Այս օտար և խորթ մարդիկ իրանց բերանն առնելով հայկական դպրությունը մի նպատակ են ունեցել միայն՝ լեզուն կրոնափոխության միջոց շինել և ոչ թե հայոց լեզու մշակել: Աղայանը քննադատում է նաև Մխիթարյան միաբանությունը, որը նույնպես, կրոնական ու քաղաքական նպատակներով բաղմամբով աղավաղումներ է մտցրել իր հրատարակությունների մեջ:

Աղայանը ցույց է տալիս նաև այն թե ինչպես որոշ հոգևորականներ ևս աղավաղում են ժողովրդի լեզուն: Այդ մասին նա գրում է, որ որոշ երիտասարդ արեղաներ «իրենց մեծերին դուր գալու համար սկսում են ծոմոկել կարգացվածքը և խոսվածքը: Շատերը մինչև անգամ չեն կամենում արարատյան բարբառով գրել:» Աղայանը շատ բարձր է գնահատում ժողովրդի ղերը լեզվաշինարարության գործում: Բսկ հայոց ազգային լեզվի զարգացման ու կազմավորման խնդրում կենտրոնական ու որոշիչ տեղը հատկացնում է արարատյան բարբառին: Արարատյան դաշտը հայ ժողովրդի բնօրրանն է շատ հնուց և հայ ժողովրդի որպես ազգ ձևավորման կենտրոնն է 19-րդ դարից: Այդ ազգային լեզվի առաջին և տաղանդավոր արտահայտիչը դարձավ Ս. Արուստյանը: «Լեզուն է, — գրում է Աղայանը, — որ տաղանդ է ծնում գրականական և ոչ տաղանդը լեզու: Եթե Արուստյանը չլիներ Քանաքեռի ձնունդ, նրանց մեջ մեծացած, նրանց մեջ անած, նրանց ցավովը ցաված, նրանց ուրախության հետ ուրախացած, ոչ մի 'նորպատ նորան չէր կարող այդ անմահությունը պարգևել, այդ կրակոտ լեզուն նորա կրակոտ սրտին տալ:

Արուստյանը գրեց յուր «Վերք Հայաստանի»-ն ոչ թե նրա համար որ մի րան գրած լինի, որ անուն ստանա, այլ նորա համար, որ չէր կարող չգրել, նորա սիրտը ցավում էր, նորա լացը գալիս էր, պետք է լար, որ հանգստանար յուր սիրտը: Բայց ով էր տվել նորան այս դպացումը, այս լեզուն — ժողովուրդը: Նա հետ դարձրեց ժողովրդին նրանից ստացած տաղանդը ավելի շահեցրած, որպես հավատարիմ և ազնիվ ու հարազատ զավակ յուր սիրուն հայրենյաց...»²

Այսպիսով ազգային լեզվի և կուլտուրայի ոգին, նորան շունչ ու կենդանի ուժ տվողը ժողովուրդն է, նրա անսահման հարստությունը, նրա պարզ ու անարատ ոճը: Ահա թե ինչու Արուստյանը հարց է տալիս. «Օրորոցի վրա մեր լեզվով մեզ նանիկ ասացին, էն էլա մեր միտքը չի պետք է ընկնի:» Մեր անվանի դրողները, Արուստյանը, Բաֆֆին, Թումանյանը, Շիրվանզադեն և ուրիշները ստեղծել են անմահ երկեր այն բանի հետևանքով, որ նրանք բոլոր թելերով կապված են եղել ժողովրդի հետ, խորը կերպով ուսումնասիրել են նրա լեզուն, ոճը, ասույթները, նրա իմաստությունները

¹ Ղ. Աղայան, Երկեր, հատ. 4, էջ 253—256:

² Նույն տեղում, էջ 256:

և այդ բոլորը մտցրել են իրենց ստեղծագործությունների մեջ, որը թե մտքի և թե լեզվի հարստություն է:

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի որպես ազգ ձևավորվելու պրոցեսը և նրա ազգային լեզվի ստեղծումը տեղի է ունենում Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո:

Վ. Տերյանը գրում է. «Են տաճկահայկական հարցի լուծմանը Թյուրքիայի սահմաններում չեմ հավատում»¹ Այդ հարցի լավագույն լուծումը նա համարում էր հայկական բոլոր շրջանների միացումը Ռուսաստանին. «Եթե դա հնարավոր է. — գրում է Տերյանը, — ուրեմն մեր ժողովրդի երկու խոշոր հատվածների միացումով ավելի ևս կդրեղանա այն կուլտուրական հոսանքը, որը փափաղելի է ինձ համար, եթե չլինի այդ, ապադաշտում էլ մենք պիտի ձգտենք այդ միացման: Տաճկաստանի վերածնությունը ևս չեմ հավատում, իսկ Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի է: Եվ կապելով իմ լավագույն հույսերը առաջավոր ողջ գեմոկրատիայի հույսերին և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»²:

Տերյանը հայ ժողովրդի, նրա լեզվի, զրականության ու կուլտուրայի ծաղկումը կապում էր ողջ մեծ ժողովրդի ունեցած ապագայի հետ. «Երբ երիտասարդ Ռուսիան կթափահարե իր արծվի թևերը, — գրում է Տերյանը, — երբ երկրի կենդանի ուժերը զարնան ելման ջրի նման կշարժվեն հզոր ու խնդուն»³:

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության լույսի տակ անհրաժեշտ է շարունակել պայքարը հայոց լեզվի մաքրության ու անաղարտության համար, հստակ ու պարզ մտածողության համար: Պետք է ձգտել լեզվի այնպիսի կլասիկ պարզություն, հստակություն, ինչպիսին մեզ սովորեցնում են մարքսիզմի կլասիկները, ինչպիսի լեզվի սքանչելի օրինակ է մեր մեծ ուսուցիչ ընկեր Ստալինի լեզուն:

ԸՆԿ. Մ. ՄԿՐՅԱՆԻ ԵՆՈՒՅԹԻՑ

Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է, որ լեզուն հաղորդակցման գործիք լինելով, դրա հետ միասին հանդիսանում է հասարակության պայքարի ու զարգացման գործիք, որ լեզուն անխղելիորեն կապված է մտածողության հետ, որ լեզուն ազգային կուլտուրայի ձևն է: Նշանակում է լեզվի մաքրության հարցը մեզ համար չափազանց կարևոր քաղաքական-հասարակական նշանակություն ունեցող հարց է և մեր լեզվաբաններն ու գրականագետները չեն կարող անտարբեր մնալ դրա նկատմամբ: Պատմությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման գործում զեղարվեստական զրականությունը խոշոր նշանակություն է ունեցել և ունի: Երա համար էլ հատուկ ուշադրություն պետք է դարձնել մինչև հիմա էլ մեր զրոհների մոտ հանդիպող գրաբարի և բարբառների սխալ օգտագործման, մեր հարուստ լեզվի բառարանային ֆոնդին և քերականական կանոններին չտի:

¹ Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 182:

² Նույն տեղում, էջ 182:

³ Նույն տեղում, էջ 194: